Արտո Չաքմաքչյանը (ծնվ. 1933) միջազգային ճանաչում վայելող քանդակագործ է: Նա Հայաստան է եկել Եգիպտոսից, ապրել և ստեղծագործել է հայրենիքում, իսկ ներկայումս բնակվում է Կանադայի Մոնրեալ քաղաքում: Ժամանակակից արվեստում իր ուրույն տեղը զբաղեցրած տաղանդավոր արվեստագետի արձանները զարդարում են կանադական և ամերիկյան տարբեր քաղաքների պուրակներն ու թանգարանները: Արվեստագետի ստեղծագործական յուրաքանչյուր շրջան հետաքրքիր է յուրովի, ամեն մի շրջան ձեռք է բերել ինքնատիպ բարձր որակ: Արվեստագետին բնութագրող թեմատիկ և ոճական առանձնահատկությունները հետաքրքրական են յուրահատուկ մտածելակերպով, ինքնատիպ մոտեցմամբ:

Թեև Չաքմաքչյանի ստեղծագործական հիմքն են կազմում համաշխարհային կերպարվեստի նվաճումների լայնահայաց ուսումնասիրություններն ու ներշնչանքը, սակայն գրեթե բոլոր ստեղծագործական շրջաններում նա ձգտում է պահպանել իր անհատականությունը դրսևորող մոտեցումը:

Բարդ տրամաբանական թելով են միահյուսված հատկապես արվեստագետի թեմատիկ շարքերը, որոնք միշտ ընդգրկում են որոշակի ժամանակահատված, արտացոլում արվեստագետի աշխարհը, հետաքրքության ոլորտը, օժտված են գերլարվածությամբ, անհանգիստ ֆակտուրայով, բարձր հուզականությամբ, մշտապես մտահոգ են և հարցասեր: Եթե ընդհանուր նկարագրության ենթարկենք և առանձնացնենք Մարդ հասկացությունն առհասարակ արվեստագետի կյանքում, ապա կարող ենք սկսել ընդհանուր գծերից: Ժամանակի ընթացքում մարմինն աստիճանաբար հեռացել, կորցրել է իր ֆիզիկական ձևն ու «Աստվածային գեղեցկությունը», բայց ձեռք է բերել նոր ձև, հոգեվիճակ, սնամեջ, սակայն խիստ հոգևոր: Իր ստեղծագործության մի զգալի հատվածը կազմող մարդակերպ այս ֆիգուրներով արվեստագետը մատնացույց է անում մարդուն իր խնդիրներով, միայնությամբ, հասարակության հետ հարաբերվելու և մշտապես հակադրվելու պահանջով: Համաշխարհային և հայ փիլիսոփայական

մտքի իմացության շնորհիվ Արտո Չաքմաքչյանն իր ստեղծագործություններին հաղորդում է յուրօրինակ տրամադրություն, խորասուզվելու կարողություն: «Մայրը» (1965), «Ճիչը» (1999), «Կերպարն անիվի հետ» (2001) և այլն, իրենց դիմախաղով, ռիթմիկ անհարթ ֆակտուրայով, անմիջականորեն համակում են դիտողի ուշադրությունը, երկխոսություն ծնում: Արվեստագետը ձգտում է քանդակային կերպարներին տալ առավել ընդհանրական, երբեմն նույնիսկ սիմվոլիկ մեկնաբանություն: Նա զարգացնում է քանդակագործությունն ու գծանկարչությունը, բայց ոչ ֆիզիկական մարմնի առավել ճշգրիտ պատկերման ուղղությամբ. խորացնում է պատկերման հոգեբանական բովանդակությունը, կերպարվեստում ընդլայնում է դարաշրջանի հոգևոր կյանքի արտահայտման հնարավորությունները:

Նկարագրելու համար Արտո Չաքմաքչյանի արվեստում Կոմիտասին նվիրված ստեղծագործությունները, առաջին տպավորության հիմնական հաղորդիչները կարող են լինել դրամատիզմը, լարված, խորը մելամաղձոտությունը, խիստ հասցեական լինելու միտումը: Դրանք հաճախ պետք է դիտել ոչ միայն աչքով, այլ մտավոր հատուկ տեսողությամբ, ինտելեկտուալ բանալու օգնությամբ՝ նյութի մեջ խորասուզվելով մեծ ուշադրությամբ: Առաջին և ամենակարևոր ընդհանրությունն այստեղ մեծ արտահայտչականությունն է: Կոմիտասի կերպարը ներշնչանքի անսպառ աղբյուր է եղել քանդակագործի համար: Եվ զարմանալի չէ, որ արվեստագետը բազմիցս անդրադարձել է այդ թեմային:

Արվեստագետին ողջ կյանքի ընթացքում ուղեկցել են հայրենի բնության և արվեստի պատկերները, հայկական միջնադարյան քանդակագործության և ճարտարապետության առանձին դետալներ: Զուլված նրա էությանն ու մտապատկերին՝ դրանք ժամանակ առ ժամանակ իրենց կերպն են ստանում տարբեր հորինվածքներում:

Ստեղծագործական ակունքները վերցնելով հայրենի պատմությունից, բնաշխարհից, հայրենի ողբերգական իրողություններից, նույնիսկ տեղափոխվելով օտար ափեր, նա չհրաժարվեց իր համար սրբագործված սկզբունքներից և դեռ հետագայում էլ հայրենի թեմաներով ստեղծեց բազում կարևոր ստեղծագործություններ: Օրինակ, նա ստեղծեց հայ հանճարի՝ Նարեկացու մի շարք արձաններ՝ այստեղ մարմնավորելով հայի ճակատագիրը:

Չաքմաքչյանի «Նարեկացին» (1969) եզակի է մյուս ստեղծագործությունների մեջ իր յուրահատուկ մեկնաբանությամբ: «Ի խորոց սրտի» արտահայտությունն ամենաուղղակի իմաստով իրականության է կոչել արվեստագետը: Ամենը կատարվում է ներսում, քանդակի անհանգիստ ֆակտուրայից կարելի է թափանցել դեպի «Նարեկացու աշխարհը»: Այստեղ ևս առկա է ձեռքին հենած դեմքը՝ չաքմաքչյանական ստորագրությունը համարվող ժեստը, բայց այս անգամ՝ ներսից: Ձեռքը դեմքի խորդուբորդ ձևերից ներս է անցել, սակայն հին հանդիսավորությամբ և «մտածողի» համամարդկային տրտմությամբ արտահայտում է մարդու բազմաթիվ հարցադրումները: Ճշմարիտ է, որ գեղեցիկ բաները արցունքով են ծնվում, և ավելի խորիմաստ է հանճարեղ Միքելանջելոյի պատգամը՝ «գեղեցիկ բաները արյուն-տառապանքով են արարվում»:

Չաքմաքչյանի գծանկարչության մեջ հստակորեն արտացոլված են նրա սիմվոլիստական հետաքրքրությունները, կուբիստական ձևաստեղծման և դեֆորմացիայի փորձարկումները, անթաքույց սերը հոգեբանության և փիլիսոփայության նկատմամբ: Գծանկարների մեծ մասը սև ու սպիտակ է, զերծ գույնից, վառ կոնտրաստային գունաբծերի միախառնումից: Բացառապես էքսպրեսիվ գիծը շեշտելու համար հաճախ արվեստագետը կերտում է ռիթմիկ, դինամիկ, գերլարված պլաստիկայով օժտված պատկերներ: Ինտելեկտուալ խաղի մեջ սուզելով դիտողին՝ առաջին հայացքից անընկալելի թվացող նկարներն աստիճանաբար հոգեհարազատ և ընթեռնելի են դառնում:

Ոչ մի լեզու, ոչ հենց իրենը՝ արվեստագետինը, ոչ էլ ամենախորաթափանց քննադատինը, չի կարող փոխարինել այդ զգացումներին, որոնք մարդկային ներքին ապրումների անբաժանելի մասն են կազմում: Արվեստագետը մարդկության սահմանումը ներկայացնում է պարզությամբ: Մարդը տեսանելի և միևնույն ժամանակ՝ անտեսանելի, անբացատրելի, առեղծվածային էակ է այստեղ:

Շուշան Վարդանյան
Արվեստաբան, արվեստագիտության թեկնածու

Արվեստագետի մոր դիմանկարը, 1960
Թուղթ, ֆլոմաստեր, ռապիդոգրաֆ
40 x 28,5 սմ

Portrait of the Artist's Mother, 1960
Felt-tip pen and rapidograph on paper
40 x 28,5 cm

Կոմիտաս, 1960
Ստվարաթուղթ, թանաք
40 x 30 սմ

Komitas, 1960
Ink on cardboard
40 x 30 cm

Կոմիտասն ու իր ստվերը, 1964
Թուղթ, թանաք, ջրաներկ
29 x 20,5 սմ

Komitas and His Shadow, 1964
Watercolor and ink on paper
29 x 20,5 cm

Ինքնադիմանկար Նաիրիի համար, 2001
Ստվարաթուղթ, թանաք
34 x 24 սմ

Self-portrait for Nairi, 2001
Ink on cardboard
34 x 24 cm

Իմ աշխատանքներում ես միշտ փորձում եմ ձևերը երկխոսության մեջ դնել միմյանց հետ, քանի որ քանդակագործության մեջ ստատիկ ձև գոյություն չունի: Ես գտնում եմ, որ քանդակի երկու ծավալների մեջ առավել արժեքավորը երրորդն է, որը ներկա է իր բացակայությամբ: Վերջինիս առկայությունը միայն ներըմբռնողաբար է ընկալելի: Արվեստի գործը փոխանցող ուղերձը ոչ թե նրա առարկայի, այլ նրա ծավալների փոխհարաբերությունների մեջ է: Ինձ համար արվեստի ստեղծագործության ճշմարիտ արժեքը նրա ներքին բովանդակությունն է, որը մնում է թաքնված: Արվեստի ստեղծագործությունը հարց է առաջադրում, որը կորցնում է իր նշանակությունը՝ մեկ անգամ պատասխան ստանալուց հետո: Վավերական և արժեքավոր արվեստի ստեղծագործությունը չի կարող գոյություն ունենալ առանց ներքին լարվածության: Վերջինս արդյունք է դինամիկայի, որն առկա է մեկից ավելի ձևերի միջև, ինչը և քանդակը վերածում է լիարժեք միասնության:

Արտո Չաքմաքչյան